ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 39-Ն

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետի և Բերդի քաղաքապետի միջև 02.09.2014 թ. կնքված սուբվենցիայի հատկացման N 20 պայմանագիրը

**համայնքի ավագանին որոշում է**

Բերդ համայնքի 2014 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

1)համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերն ավելացնել 1096.2 հազար դրամով և հաստատել`

բյուջեի եկամտային մասը 212523.2 հազար դրամ,

բյուջեի ծախսային մասը 212523.2 հազար դրամ:

2) բյուջեի եկամտային մասում ,,Ընթացիկ սուբվենցիա,, տողն ավելացնել 1096.2 հազար դրամի չափով` համաձայն N 1 հավելվածի, ծախսային մասում` 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ տողերն ավելացնել համապատասխանաբար 181.6 հազար դրամով, 224.7 հազար դրամով, 212.4 հազար դրամով, 224.7 հազար դրամով, 252.8 հազար դրամով, ընդամենը` 1096.2 հազար դրամով` համաձայն N 2 հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1
Բերդ համայնքի
ավագանու 2014 թվականի
սեպտեմբերի 24-ի N 39-Ն որոշման

## 2014 թվականի համար սահմանված համայնքի եկամտատեսակները

| Հ/հ | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ | Գումարը /հազ.դրամ/ |
|---|---|---|
| | ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 5500.00 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 14000.00 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3500.00 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 4000.00 |
| 5 | Այլ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 6500.90 |
| 6 | ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ | 8000.00 |
| 7 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 11000.00 |
| 8 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 6000.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 58500.90 |
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | |
| 9 | ԴՈՏԱՑԻԱ | 117969.30 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 4358.50 |
| 11 | ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ | 3301.90 |
| 12 | Ընթացիկ սուբվենցիա | 11212.90 |
| | Ընթացիկ սուբվենցիա | 1096.20 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 137938.80 |
| 13 | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ | 6806.00 |
| 14 | ՏԱՐԵՍԿԶԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | 9277.50 |
| 15 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 6960.30 |
| 16 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 2317.20 |
| | ԱՄԲՈՂՋԸ | 212523.20 |

Քաղաքապետ Հ. Մանուչարյան

Հավելված 2
Բերդ համայնքի
ավագանու 2014 թվականի
սեպտեմբերի 24-ի N 39-Ն որոշման

## Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 2014թ.

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | Նախատեսված գումարը /հազ.դրամ/ |
|---|---|---|
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ | 43709.6 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 41459.7 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ | 30419.9 |
| 4 | ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ | 19006.7 |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ , ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 54162.8 |
| 6 | ՍՈՑ ԾԱԽՍԵՐ | 500.0 |
| 7 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԱՍ | 3000.0 |
| 8 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԱՍ | 1500.0 |
| 9 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 4358.5 |
| 10 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 2000.0 |
| 11 | ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 3100.0 |
| 12 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 9306.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 212523.20 |

Քաղաքապետ Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 40-Ա

## ԼԻԶԻՆԳՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի գյուղատնտեսության զարգացման խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսական տեխնիկա: ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ ՓԲԸ-ն համայնքներին հնարավորություն է տալիս ձեռք բերելու գյուղատնտեսական տեխնիկա՝ շահավետ պայմաններով: Համայնքի համար առաջնահերթություն է մի շարք գյուղատնտեսական սարքավորումների՝,,Բելառուս,, МТЗ-82-1 մակնիշի տրակտորի, Л-131-7 մակնիշի կուլտիվատորի, СПЧ-6 ЛТ /եգիպտացորեն, արևածաղիկ, ճակնդեղ/ մակնիշի սերմնացանի ձեռք բերումը: Համայնքի ղեկավարն առաջարկում է 20% կանխավճարով, 10 միլիոն 25 հազար դրամով, 6 տարի մարման ժամկետով գնել անհրաժեշտ տեխնիկան:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը `

**համայնքի ավագանին որոշում է**

1.Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերումը համարել առաջնահերթություն և ներկայացնել լիզինգի հայտ, 20% կանխավճարով, 10 միլիոն 25 հազար դրամով, 6 տարի մարման ժամկետով, գյուղատնտեսական սարքավորումներ՝ ,,Բելառուս,, МТЗ-82-1 մակնիշի 1 տրակտոր, Л-131-7 մակնիշի 1 կուլտիվատոր, СПЧ-6 ЛТ /եգիպտացորեն, արևածաղիկ, ճակնդեղ/ մակնիշի 1 սերմնացան ձեռք բերելու համար:

2.2014-2020 թ.թ. ընթացքում յուրաքանչյուր տարվա համար համայնքի բյուջեում նախատեսել առնվազն լիզինգի գծով, վարձավճարների չափով, ծախսային համապատասխան հոդված:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 41-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով

**համայնքի ավագանին որոշում է**

Լիզինգային ծրագրով գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդի /11.01.02.52/ ,,Պահուստային միջոցներ,, /4891/ հոդվածից 1272.5 հազար դրամ և համայնքի ,,Հանգստի գոտիներ և զբոսայգիներ,, /08.01.01.51/ նախահաշվի ,,Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում,, /5113/ հոդվածից 1311.5 հազար դրամ ուղղել համայնքի ,,Գյուղատնտեսություն,, նախահաշվի /04.02.01.51/ ,,Տրանսպորտային սարքավորումներ,, /5121/ հոդվածին:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 42-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով

**համայնքի ավագանին որոշում է**

Քաղաքապետարանի վարչական շենքի 2-րդ և 3-րդ հարկերի աշխատասենյակների ընթացիկ վերանորոգման նպատակով համայնքի բյուջեի վարչական մասի /11.01.02.51/ պահուստային ֆոնդի ,,Պահուստային միջոցներ,, /4891/ հոդվածի 4-րդ եռամսյակից 1 320 000 դրամ ուղղել ,,Քաղաքապետարանի պահպանման ծախսերի նախահաշվի,, /01.01.01.51/ ,,Շենքերի և կառույցների ընթացիկ վերանորոգում,, /4251/ հոդվածին:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 43-Ա

## ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՍՏԱՑՈՂ ՈՐՈՇ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետի և Բերդի քաղաքապետի միջև 02.09.2014 թ. կնքված սուբվենցիայի հատկացման N 20 պայմանագիրը,

**համայնքի ավագանին որոշում է**

Քաղաքապետարանի աշխատակազմի և համայնքային բյուջետային կազմակերպությունների 1974 թ. հունվարի 1-ից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների նպատակային սոցիալական վճարների գումարների վճարմամբ պայմանավորված առաջացող լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման նպատակով՝ վերոնշյալ աշխատողներին տրամադրել հավելավճար 4.682.00 դրամի չափով և հաստատել՝

1)քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2)մարզադպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի,

3)արվեստի դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 3 հավելվածի,

4)գրադարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 4 հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

*Հավելված 1*

*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*

*2014 թվականի սեպտեմբերի 24-ի N 43-Ա որոշման*

Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը` 23

Բերդի քաղաքապետարանի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Հավելյա վճար | Ամսական աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | | 5 |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 231,000.00 | | 231,000.00 |
| | Հայեցողական պաշտոններ | | | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 114,000.00 | | 114,000.00 |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 85,150.00 | | 85,150.00 |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 73,585.00 | | 73,585.00 |
| | Համայնքային ծառայողներ | | | | |
| 5 | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | | 111,700.00 | | 111,700.00 |
| | Ֆինանսատնտեսագիտական բաժին | | | | |
| 6 | Բաժնի պետ 2.1-2 | 1 | 102,500.00 | | 102,500.00 |
| 7 | Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 66,140.00 | 4.682.00 | 70.822.00 |
| 8 | Առաջին կարգի մասնագետ 3.2-9 | 1 | 66,140.00 | | 66,140.00 |
| 9 | Առաջին կարգի մասնագետ 3.2-1 | 1 | 66,140.00 | 4.682.00 | 70.822.00 |
| 10 | Առաջին կարգի մասնագետ 3.2-7 | 1 | 66,140.00 | 4.682.00 | 70.822.00 |
| | Ներքին աուդիտի բաժին | | | | |
| 11 | Բաժնի պետ 2.1-3 | 1 | 102,500.00 | | 102,500.00 |
| | ՔԿԱԳ Բերդի ՏԲ | | | | |
| 12 | Բաժնի պետ 1.3-1 | 1 | 256,624.00 | | 256,625.00 |
| 13 | Առաջին կարգի մասնագետ 3.2-10 | 1 | 133,603.00 | | 133,603.00 |
| | Աշխատակազմ | | | | |
| 14 | Գլխավոր մասնագետ 2.3-2 | 1 | 96,680.00 | | 96,680.00 |
| 15 | Գլխավոր մասնագետ 2.3-3 | 1 | 96,680.00 | | 96,680.00 |
| 16 | Առաջատար մասնագետ 3.1-7 | 1 | 66,140.00 | | 66,140.00 |
| 17 | Առաջատար մասնագետ 3.1-6 | 1 | 66,140.00 | 4.682.00 | 70.822.00 |
| 18 | Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 66,140.00 | 4.682.00 | 70.822.00 |
| 19 | Առաջին կարգի մասնագետ 3.2-3 | 1 | 66,140.00 | | 66,140.00 |
| | | | | | |
| | Տեխսպասարկման անձնակազմ | | | | |
| 20 | Վարորդ | 1 | 73,585.00 | | 73,585.00 |
| 21 | Հավաքարար | 2 | 33,070.00 | | 66,140.00 |
| 22 | Հանդապահ | 1 | 66,140.00 | | 66,140.00 |
| | Ընդամենը | 23 | 2,105,937 | 23.410.00 | 2,129.347 |

Քաղաքապետ Հ. Մանուչարյան

*Հավելված 2*

*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*
*2014 թվականի սեպտեմբերի 24-ի N 43-Ա որոշման*

Բերդի մանկապատանեկան մարզադպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը` 10.5
2. Բերդի մանկապատանեկան մարզադպրոցի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Հավելավճար | Ամսական աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | 5 | 4 | | 6 |
| 1 | Տնօրեն | 1 | 75,000.00 | | 75,000.00 |
| 2 | Մարզիչ | 1 | 66,140.00 | 4.682.00 | 70.822.00 |
| 3 | Մարզիչ | 1 | 66,140.00 | 4.682.00 | 70.822.00 |
| 4 | Մարզիչ | 1 | 66,140.00 | | 59,524.00 |
| 5 | Մարզիչ | 1 | 66,140.00 | | 59,524.00 |
| 6 | Մարզիչ | 0.5 | 66,140.00 | 2.341.00 | 35.411.00 |
| 7 | Մարզիչ | 0.5 | 66,140.00 | | 33,070.00 |
| 8 | Մարզիչ | 0.5 | 66,140.00 | | 33,070.00 |
| 9 | Բուժքույր | 1 | 66,140.00 | 4.682.00 | 70.822.00 |
| 10 | Տնտեսվար | 1 | 66,140.00 | | 66,140.00 |
| 11 | Տեխնիկական աշխատող | 2 | 66,140.00 | | 132,280.00 |
| | **Ընդամենը** | **10.50** | **736,400.00** | **16.387.00** | **690,098.00** |

Քաղաքապետ Հ. Մանուչարյան

*Հավելված 3*

*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*
*2014 թվականի սեպտեմբերի 24-ի N 43 -Ա որոշման*

Բերդի արվեստի դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1 Աշխատակիցների թվաքանակը՝ 6.4

2 Բերդի արվեստի դպրոցի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Հավելավճար | Ամսական աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | | 5 |
| 1 | Տնօրեն | 1 | 73600 | | 73600 |
| 2 | Նկարչության դասատու | 1 | 66140 | 4682 | 70822 |
| 3 | Նկարչության դասատու | 1.4 | 66140 | | 99210 |
| 4 | Գորգագործության դասատու | 1 | 66140 | | 66140 |
| 5 | Նկարչության դասատու | 1 | 66140 | 4682 | 70822 |
| 6 | Տեխն.աշխատող | 1 | 66140 | | 66140 |
| | **Ընդամենը** | **6.4** | **404300** | **9364** | **446734** |

Քաղաքապետ Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բենկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 44-Ա

## ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱԼՈԴԻ ԱԹՈՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Բերդ համայնքի բնակիչ Անդրանիկ Վալոդի Աթոյանը դիմել է կառուցապատման իրավունքով իրեն տրամադրված հողամասի կառուցապատման իրավունքն օտարելու խնդրանքով:

Բերդ համայնքի ավագանու 30 հունվարի 2012թ. N5-Ա որոշման և Բերդ համայնքի ղեկավարի 30 հունվարի 2012 թ. N 5-Ա որոշման համաձայն Բերդ քաղաքի բնակիչ Անդրանիկ Վալոդի Աթոյանին Բերդ քաղաքի Հայկ Նահապետ 2 հասցեում 50 տարի ժամկետով կառուցապատման իրավունքով տրամադրվել է 20 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս, կադաստրային համարը՝ 11-002-0100-0021, տարեկան 20000 դրամ վարձավճարով: 2012 թ. հունիսի 13-ին Աթոյանի հետ կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի առուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր: Պայմանագրի 4.3.5. կետի համաձայն Աթոյանն իրավունք ունի տնօրինելու կառուցապատման իրավունքը՝ փոխանցելու այլ անձի ազատորեն օտարելու, գրավ դնելու այն, ինչպես նաև կատարելու այլ գործարքներ՝ կառուցապատման իրավունքի նկատմամբ:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հաշվի առնելով վերոնշյալ պայմանագրի 4.3.5. կետի պայմանները

**համայնքի ավագանին որոշում է**

Թույլատրել Անդրանիկ Վալոդի Աթոյանին Բերդ քաղաքի Հայկ Նահապետ 2 հասցեում 50 տարի ժամկետով 20000 դրամ տարեկան վարձավճարով, կառուցապատման իրավունքով իրեն տրամադրված 20 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի, կադաստրային համարը՝ 11-002-0100-0021, կառուցապատման իրավունքն օտարել այլ անձի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 45-Ա

## 65.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հաշվի առնելով, որ նշված հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ և համայնքի ղեկավարի առաջարկությունը

**համայնքի ավագանին որոշում է**

Տալ համաձայնություն Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության բնակավայրերի խառը կառուցապատման հողամասերից 65.2 քառակուսի մետր մակերեսով հողամասն աճուրդով օտարելու համար, ծածկագիրը՝ 11-002-0098-0045:

Մեկնարկային գինը սահմանել 700 000 դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բնկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

**24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 46-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով

**համայնքի ավագանին որոշում է**

1. Հաստատել համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման /ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի, գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների/ հաշվետվությունը համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Բերդի համայնքի սեփականաշնորհված և վարձակալական հիմունքներով հատկացված հողերի օգտագործման սխեման համաձայն N 2 հավելվածի:
3. Հաստատել համայնքի վարձակալությամբ հատկացվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վարձավճարների չափը 1 հեկտարի հաշվով՝ համաձայն N 3 հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1
Ձև N 22

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների , առ 01.07.2014 թ.)

Մարզ: Տավուշ (անվանում) — 11 (Կոդ)

Համայնք: Բերդ (անվանում) — 871 (Կոդ)

*(հեկտարներով)*

| NN | Նպատակային նշանակության | Հողատեսք, գործառնական նշանակություն | Կոդի NN | Ընդամենը (2+3+4+8+12) | Սեփականության սուբյեկտ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | համայնքային | | | | պետական | | | | Օտար պետ-ի, քաղ-ի և ՀՀ-ում կաց |
| | | | | | | | ընդամենը (5+6+7) | տրված օգտագործման այլ անձանց | տրված վարձակալության | չտրված վարձակալության և օգտագործման | ընդամենը (9+10+11) | տրված օգտագործման | տրված վարձակալության | չտրված վարձակալության և օգտագործման | |
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 806.98 | 581.86 | | 225.120 | | 4.50 | 220.62 | | | | | |
| 1.2 | | բազմ տնկարկներ, ընդամենը | | 21.75 | 0.51 | | 21.24 | | 2.00 | 19.24 | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում՝ պտղատու այգի | | | | | | | | | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | 21.75 | 0.51 | | 21.24 | | 2.00 | 19.24 | | | | | |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | 126.83 | 72.00 | | 54.83 | | | 54.83 | | | | | |
| 1.4 | | արոտ | | 541.74 | | | 541.74 | | | 541.74 | | | | | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | 109.60 | 0.53 | | 109.07 | | | 109.07 | | | | | |
| 1 | | Ընդամենը | | 1606.90 | 654.90 | | 952.00 | | 6.50 | 945.50 | | | | | |
| 2.1 | 2.Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | | 200.79 | 198.54 | | 2.25 | | 0.14 | 2.11 | | | | | |
| 2.1.1 | | այդ թվում՝ տնամերձ հողեր | | 194.04 | 193.92 | | 0.12 | | 0.12 | | | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ամառ-ն) | | 0.25 | 0.25 | | | | | | | | | | |
| 2.2 | | հասարակական կառուցապ. | | 21.49 | 2.76 | 11.52 | 0.77 | | 0.30 | 0.47 | 6.45 | 3.71 | | 2.74 | |
| 2.3 | | խառը կառուցապատման | | 6.53 | 0.07 | 5.42 | 1.04 | 0.50 | | 0.54 | | | | | |
| 2.4 | | ընդհանուր օգտագործման | | 49.58 | | | 49.58 | | | 49.58 | | | | | |
| 2.5 | | այլ հողեր | | 56.08 | | | 56.07 | | | 56.07 | | | | | |
| 2 | | Ընդամենը | | 334.46 | 201.37 | 16.94 | 109.71 | 0.50 | 0.44 | 108.76 | 6.45 | 3.71 | | 2.74 | |
| 3.1 | 3. Արդյունաբ. ընդերքօգտ.և այլ արտ. նշանակութ. օբ. | արդյունաբերության | | 11.46 | 0.10 | | 11.36 | | 0.24 | 11.12 | | | | | |
| 3.2 | | գյուղատնտեսական, արտադր. | | 2.68 | 0.85 | 0.48 | 1.35 | | | 1.35 | | | | | |
| 3.3 | | պահեստարանների | | | | | | | | | | | | | |
| 3.4 | | | | 0.64 | | | | | | | 0.64 | | | 0.64 | |
| 3 | | Ընդամենը | | 14.78 | 0.95 | 0.48 | 12.71 | | 0.24 | 12.47 | 0.64 | | | 0.64 | |
| 4.1 | 4.Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ | Էներգետիկայի | | 1.39 | | | 1.39 | | | 1.39 | | | | | |
| 4.2 | | կապի | | 0.19 | | | 0.19 | | | 0.19 | | | | | |
| 4.3 | | տրանսպորտի | | 17.28 | | | 6.25 | | | 6.25 | 11.03 | | | 11.03 | |
| 4.4 | | կոմունալ ենթակառուցվածք | | 8.06 | 0.06 | | 8.00 | | | 8.00 | | | | | |
| 4 | | Ընդամենը | | 26.92 | 0.06 | | 15.83 | | | 15.83 | 11.03 | | | 11.03 | |
| 5.1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպանական | | 62.17 | | | 0.04 | | | 0.04 | 62.13 | | | 62.13 | |
| 5.1.1 | | այդ թվում՝ արգելոցներ | | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | արգելավայրեր | | | | | | | | | | | | | |
| 5.1.3 | | ազգային պարկեր | | 62.17 | | | 0.04 | | | 0.04 | 62.13 | | | 62.13 | |
| 5.2 | | առողջարարական | | | | | | | | | | | | | |
| 5.3 | | հանգստի | | | | | | | | | | | | | |
| 5.4 | | պատմական և մշակութային | | 30.75 | | | 6.50 | | | 6.50 | 24.25 | | | 24.25 | |
| 5 | | Ընդամենը | | 92.92 | | | 6.54 | | | 6.54 | 86.38 | | | 86.38 | |
| 6 | 6.Հ առ ուկ նշա նակ | Ընդամենը | | 35.61 | | | | | | | 35.61 | | | 35.61 | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | 583.07 | | | | | | | 583.07 | | | 583.07 | |
| 7.2 | | թփուտ | | | | | | | | | | | | | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | | | | | | | | | | | | |
| 7.5 | | արոտ | | | | | | | | | | | | | |
| 7.6 | | այլ հողեր | | | | | | | | | | | | | |
| 7 | | Ընդամենը | | 583.07 | | | | | | | 583.07 | | | 583.07 | |
| 8.1 | 8. Ջրային | գետեր | | 5.88 | | | | | | | 5.88 | | | 5.88 | |
| 8.2 | | ջրամբարներ | | 0.57 | | | 0.57 | | | 0.57 | | | | | |
| 8.3 | | լճեր | | | | | | | | | | | | | |
| 8.4 | | ջրանցքներ | | 1.36 | | | 1.36 | | | 1.36 | | | | | |
| 8.5 | | հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ. | | 7.81 | | | | | | | | | | | |
| 8 | | Ընդամենը | | | | | 1.93 | | | 1.93 | 5.88 | | | 5.88 | |
| 9.1 | 9. Պահուստային | աղուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | | |
| 9.4 | | | | | | | | | | | | | | | |
| 9.5 | | այլ անօգտագործելի հողեր | | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9) | | | | 2702.47 | 857.280 | 17.42 | 1098.71 | 0.50 | 7.18 | 1091.02 | 729.06 | 3.71 | | 725.35 | |

Համայնքի ղեկավար [signature] Հ. Մանուչարյան

Հավելված 2
2014թ.

# ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԽԵՄԱՆ

| Նպատակային | գործառնական նշանակությունը հողատեսք | ԸՍՏ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ: ՍԵՓԱԿԱՆ: Սեփականատերեր | Իրավաբանական անձ | ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ: խանութ-կրպակ ավտոտնակ ներառ | ԸՍՏ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ: ջրովի վարելահող | անջրդի վարելահող | խաղող | խոտհարք | գյուղնշանակության այլ հողատեսք | արոտ | ԸՍՏ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ: ջրովի վարելահող | անջրդի վարելահող | խաղող | խոտհարք | գյուղնշանակության այլ հողատեսք | արոտ | ՉԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ: ջրովի վարելահող | անջրդի վարելահող | խաղող | խոտհարք | գյուղնշանակության այլ հողատեսք | արոտ | սեփական հողերի հարկերի գումար /ՀՀ դրամով/ | Վարձակալական հողերի վարձավճար գումար /ՀՀ դրամով/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| գյուղատնտեսական | 2րդ կարգի ջր. վ/հող | 0.19 | | | 5.00 | | | | | | 4.92 | | | | | | 0.08 | | | | | | 2793 | 72324 |
| | 3րդ կարգի ջր. վ/հող. | 0.28 | | | 11.00 | 27.54 | | | | | 7.95 | | | | | | 3.05 | | | | | | 2840 | 80613 |
| | 3րդ կարգի անջրդի վ/հող | 151.05 | | | | 98.77 | | | | | | 16.35 | | | | | | 11.19 | | | | | 856453 | 111588 |
| | 4րդ կարգի անջրդի վ/հող | 208.46 | | | | 82.81 | | | | | | 25.96 | | | | | | 72.81 | | | | | 822374 | 136290 |
| | 5րդ կարգ անջրդի վ/հող | 221.88 | | | | | | | | | | 14.35 | | | | | | 68.46 | | | | | 356117 | 37668 |
| | գ/նշ. այլ հողատեսք | 0.53 | | | | | | | 109.6 | | | | | | | | | | | | 109.07 | | 425 | |
| | 2րդ կարգ խաղ. այգի | | | | | | 1.73 | | | | | | 1.73 | | | | | | | | | | | 51900 |
| | 3րդ կարգ խաղ. այգի | 0.2 | 0.31 | | | | 19.51 | | | | | | 19.51 | | | | | | | | | | 12750 | 487750 |
| | 2րդ կարգի խոտհարք | | | | | | | 51.83 | | | | | | 45.0 | | | | | | 6.83 | | | | 261000 |
| | 4րդ կարգի խոտհարք | 72.0 | | | | | | 75.00 | | | | | | 2.4 | | | | | | 0.6 | | | 178200 | 12000 |
| | 1ին կարգի արոտ | | | | | | | | | 247 | | | | | | | | | | | 247 | | | |
| | 4րդ կարգի արոտ | | | | | | | | | 198 | | | | | | | | | | | 198 | | | |
| բնակավայրի | տնամերձն | 198.29 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 2.474460 | |
| | այգեգործակ ան | 0.25 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 8355 | |
| | հասարակա կան | 2.76 | 2.46 | 0.44 | | | | | | | | | | | | | | | | | | | 65140 | 440000 |
| | արտադրկ. | 0.23 | 14.48 | 0.24 | | | | | | | | | | | | | | | | | | | 183566 | 240000 |
| ար ն | գյուղտնտ. | 0.85 | 0.48 | | | | | | | | | | | | | | | | | | | | 16597 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 856.97 | 17.73 | 0.68 | 16.00 | 209.12 | 21.24 | 126.83 | 109.6 | 445 | 12.87 | 56.66 | 21.24 | 47.4 | | | 3.13 | 152.46 | | 7.43 | 445 | | 4.980070 | 1.931133 |

Բերդի քաղաքապետ Հ. Մանուչարյան

Հավելված 3

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ 1 ՀԵԿՏԱՐԻ ՀԱՇՎՈՎ

ՀՀ դրամով

| ՀՈՂԻ ԿԱՐԳԸ | ՎԱՐԵԼԱՀՈՂ | | ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐ | ԽՈՏՀԱՐՔ | ԱՐՈՏ |
|---|---|---|---|---|---|
| | ՋՐՈՎԻ | ԱՆՋՐԴԻ | ԽԱՂՈՂ | | |
| I | | | | | 7095 |
| | | | | | 7095 |
| II | 14700 | | 26850 | 5790 | |
| | 18900 | | 30000 | 5800 | |
| III | 10140 | 5670 | 19260 | 2475 | |
| | 14700 | 6825 | 25000 | 5000 | |
| IV | | 3945 | | | 2370 |
| | | 5250 | | | 2370 |
| V | | 1605 | | | |
| | | 2625 | | | |
| Գյուղ.նշանակության այլ հողատեսք | | 795 | | | |
| | | | | | |

Քաղաքապետ Հ. Մանուչարյան